

ISSN 1829-4987

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**  
**ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ**  
**ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ**  
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ, ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆՆԵՐԻ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ 5-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ  
**Գիտաժողովի Նյութեր**

**YEREVAN STATE UNIVERSITY**  
**FACULTY OF ECONOMICS AND MANAGEMENT**  
**CURRENT ECONOMIC PROBLEMS**  
5<sup>TH</sup> INTERNATIONAL CONFERENCE OF  
STUDENTS, POSTGRADUATES AND YOUNG SCIENTISTS  
**Proceedings**

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ**  
**ФАКУЛЬТЕТ ЭКОНОМИКИ И УПРАВЛЕНИЯ**  
**СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ЭКОНОМИКИ**  
5-ая МЕЖДУНАРОДНАЯ НАУЧНАЯ КОНФЕРЕНЦИЯ  
СТУДЕНТОВ, АСПИРАНТОВ И МОЛОДЫХ УЧЕНЫХ  
**труды конференции**

ԵՊՀ ԵԳՄ – YSU UYS – OMY EGY  
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН

2017

**Հրատարակվում է ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման  
ֆակուլտետի Գիտական խորհրդի երաշխավորությամբ**

**Published by the recommendation of the Academic Council  
of the Faculty of Economics and Management of YSU**

**Рекомендовано к печати Ученым советом  
факультета Экономики и управления ЕГУ**

**Խմբագրական խորհուրդ**

տ.գ.դ., պրոֆ. **Յ.Լ. Սարգսյան** (նախագահ), ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Գ.Ա. Ղարիբյան**,  
տ.գ.դ., պրոֆ. **Ա.Յ.Առաքելյան**, տ.գ.դ., պրոֆ. **Ս.Լ. Ղանթարջյան**, տ.գ.դ., պրոֆ. **Մ.Վ.  
Միքայելյան**, տ.գ.դ., պրոֆ. **Թ.Շ. Թորոսյան**, տ.գ.դ. **Յ.Գ. Սևազականյան**, տ.գ.դ., պրոֆ.  
**Վ.Բ. Բոստանջյան**, տ.գ.թ., դոց. **Գ.Ս. Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Վ.Գ. Խաչատրյան**

**Editorial board**

Doctor of Economics, Professor **H.L. Sargsyan** (Chairman), Corresponding Member of National Academy of Sciences of RA **G.A. Gharibyan**, Doctor of Technical Sciences, Professor **A.H. Arakelyan**, Doctor of Economics, Professor **S.L. Khantaryan**, Doctor of Economics, Professor **M.V. Mikayelyan**, Doctor of Economics, Professor **T.Sh. Torosyan**, Doctor of Economics **H.G. Mnatsakanyan**, Doctor of Economics, Professor **V.B. Bostanjyan**, PhD in Economics, Associate Prof. **G.S. Galstyan**, PhD in Economics, Associate Prof. **K.G. Khachatryan**

**Редакционная коллегия**

դ.է.ն., պրոֆ. **Գ.Լ. Տարսյան** (պրեզիդենտ), անդամ ՀԱՀ ԳԱԱ **Գ.Ա. Գարիբյան**, դ.տ.ն., պրոֆ. **Ա.Ա. Արաքելյան**, դ.է.ն., պրոֆ. **Ս.Լ. Կանտարձյան**, դ.է.ն., պրոֆ. **Մ.Վ. Միքայելյան**, դ.է.ն., պրոֆ. **Տ.Շ. Տորոսյան**, դ.է.ն. **Ա.Գ. Մնացականյան**, դ.է.ն., պրոֆ. **Վ.Բ. Բոստանջյան**, դ.է.ն., կ.է.ն., ծոց. **Գ.Ս. Գալստյան**, կ.է.ն., ծոց. **Վ.Գ. Խաչատրյան**

Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր: Միջազգային 5-րդ գիտաժողովի կյուրթեր – Եր.: ԵՊՀ ԵԳՄ, 2017 - 288 էջ:

Ժողովածուում ներառված են ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների «Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր» խորագիրը կրող միջազգային գիտաժողովի կյուրթերը:

The collection includes proceedings of the international scientific conference of students, postgraduates and young scientists “Current economic problems”.

В сборнике включены труды международной научной конференции студентов, аспирантов и молодых ученых “Современные проблемы экономики”.

**ԳՅՈՒՂՏԵՆՆԻԿԱՅԻ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ  
ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՅԱՆ ԸՆԹԱՑՔՆ ՈՒ ՀԵՏԵԿԱՆՔՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ  
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ  
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ (1991-2000 ԹԹ.)**

**Գևորգյան Մարինե**

*ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ,  
պ.գ.թ., դոցենտ*

Էլ. փոստ՝ [manan21@mail.ru](mailto:manan21@mail.ru)

Անկախության հռչակումից հետո ՀՀ-ում իրականացվեցին արմատական ագրարային վերափոխումներ: Սեփականաշնորհման առաջին տարիները մեր հանրապետությունում համընկան շրջափակման և Արցախյան պատերազմի տարիներին: Արտադրության անմիջական անկման հետ մեկտեղ, խոր ճգնաժամ ապրեցին գյուղատնտեսության գիտական բազան, նրա գենոֆոնդի վերարտադրությունը: Ագրարային արմատական վերակառուցումների առաջին երեք տարիներին գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններից բացի սեփականաշնորհվեցին նաև Հայաստանի Հանրապետության կոլեկտիվ և պետական գյուղատնտեսական ձեռնարկություններին պատկանող հանրային մյուս արտադրամիջոցները: Գյուղատնտեսական մեքենատրակտորային հավաքակայանների լուծարման պատճառով վերացավ գյուղատնտեսական տեխնիկական սպասարկման միասնական, կենտրոնացված համակարգը, լուծարվեց ճյուղի ժամանակակից տեխնիկական բազան, որի հետևանքով մեքենայացված և ինտենսիվ գյուղատնտեսությունն իր տեղը զիջեց ձեռքի աշխատանքի վրա հիմնված էքստենսիվ գյուղատնտեսությանը<sup>1</sup>: Գյուղատնտեսության մեջ շահագործվող մեքենատրակտորային հավաքակազմի շուրջ 90 տոկոսն էլ օգտագործվում էր Նորմատիվային ժամկետից 10-15 տարով ավելի<sup>2</sup>:

Անդրադառնալով գյուղտեխնիկայի սեփականաշնորհմանը՝ Նշենք, որ գյուղացիական տնտեսություններում հատկապես դժվար էր լուծվում արտադրական գործընթացների մեքենայացման խնդիրը: Եղած հին տեխնիկական գյուղացիական տնտեսությունների փոքր չափերի պայմաններում ի վիճակի էր կատարելու միայն վարի, կամ լավագույն դեպքում հնձի և այգիների բուժման աշխատանքներ:

<sup>1</sup> Տե՛ս Մանասեթյան Ն., Ագրարային հարցը երեկ և այսօր, Եր., 2005, էջ 111:

<sup>2</sup> Տե՛ս Մովսիսյան Վ., Հողի ճակատագրով. Մտորումներ տեխնոլոգիայի, Եր., 2001, էջ 248: 248:

Տեխնիկա չունեցող գյուղացիական տնտեսությունների համար սպասարկման տեսակետից կարևոր էր «Հայագրոսպասարկում» և «Հայբերրիություն» արտադրական միավորումներին կից գյուղմեքենաների շահագործման կայանների ստեղծումը<sup>1</sup>:

Տարիներ շարունակ չէր նորացվում հանրապետության գյուղատնտեսական մեքենաների պարկը: Եղած մեքենաների մեծ մասը հնացած էր և ֆիզիկապես ու բարոյապես մաշված: Մի մասն էլ պարզապես սարքին վիճակում չէր, ուրեմն չէր օգտագործվում: Ցածր էր օգտագործվող մեքենաների արտադրողականությունն ու աշխատանքի արդյունավետությունը: Գյուղատնտեսական մեքենաների օգտագործման ցածր արդյունավետությունը, այդ ամենից գատ, պայմանավորվում էր մասնավորեցված հողակտորների մանրատվածությամբ: Իբրև հետևանք, գյուղացիական տնտեսություններում գերակշռում էր ձեռքի՝ ֆիզիկական ծանր և ցածր արտադրողական աշխատանքը, որն էլ իր հեթին անհնար էր դարձնում գյուղատնտեսական սեզոնային աշխատանքները կարճ ժամանակահատվածում սկսելն ու ավարտելը:

Հատկանշական է, որ սեփականաշնորհման սկզբնական փուլում գյուղատնտեսական մեքենաների, սարքավորումների և այլ արտադրամիջոցների զգալի մասը պետք է հանձնվեր տեղական խորհուրդներին՝ գյուղացիական տնտեսություններին սպասարկելու նպատակով: Դա թուլացնում էր արտադրողների նյութական շահագրգռվածությունն ու պատասխանատվությունը այդ միջոցները պահպանելու և արդյունավետ օգտագործելու համար: Մյուս կողմից՝ այդ միջոցները միշտ չէ, որ ինչպես հարկն է ծառայում էին արտադրողների շահերին: Շատ հաճախ գյուղտեխնիկայի առանձին մասեր վաճառվում էին թանկ գներով, իսկ տեխնիկան վերածվում էր թափոնի: Գյուղտեխնիկայի բազայի փոշիացումը մեծ հարված հասցրեց գյուղացիական արտադրությանը: Գյուղում տեխնիկան կենտրոնացվեց առանձին մարդկանց ձեռքում, որոնք այնպիսի գներ էին առաջարկում, որ գյուղացին հնարավորություն չէր ունենում մշակել իր հողը: Հանրապետությունում չկար նույնիսկ պարզունակ գյուղագործիքների կազմակերպված զանգվածային արտադրություն:

Ըստ սեփականաշնորհման սկզբունքի, սեփականացնելու առաջնահերթ իրավունք ունեին տեխնիկան աշխատեցնողները: Հենց նրանք էլ դարձան գյուղտեխնիկայի սեփականատերերը: Անհրաժեշտ է

---

<sup>1</sup> Տե՛ս Մկրտչյան Հ., Հողային հարաբերությունները և արդի ագրարային բաղաբաղանության հիմնական ուղղությունները ՀՀ-ում, Եր., 1997, էջ 18:

Այն, որ դրա պատճառներից մեկն էլ այն էր, որ այդ տարիներին փախստականները վճարունակ չէին, իսկ նրանք, ովքեր նվազագույն հնարավորություն ունեին, շտապում էին օր առաջ քաղաք տեղափոխվել, անգամ՝ արտերկիր: Այսպես, փախստականներով բնակեցված գյուղերի մեծ մասը զրկվեց գյուղտեխնիկայից<sup>1</sup>:

Գյուղտեխնիկայի ձեռքբերման նպատակով ՀՀ կառավարությունը մի շարք պայմանագրեր կնքեց տարբեր պետությունների հետ: Այսպես, Հայաստանի Հանրապետության և Ճապոնիայի ու Չինաստանի կառավարությունների միջև կնքված համաձայնագրերով 1998 թ. Ճապոնիայից հանրապետություն բերվեց 15 միավոր հացահատիկային կոմբայն և 8,5 մլն դրամ արժողությամբ պահեստամասեր: 1999-2000 թ.թ. Ճապոնիայի կողմից տրամադրված 300 մլն իեն գումարով հանրապետություն ներմուծվեցին 4 տասնյակի հասնող փոքր հզորության տրակտորների, գյուղգործիքների, նաև հացահատիկահավաք կոմբայնների ու պահեստամասերի նոր խմբաքանակներ: 1999 թ. Չինաստանից բերվեց 100 տրակտոր, որոնք կոմբայնների հետ միասին մարզերում իրացվեցին բաց աճուրդային եղանակով:<sup>2</sup> 2000 թ. ՉՀՀ կառավարության կողմից 3 մլն յուան գումարով հանրապետություն ներկրվեցին փոքր հզորության 78 տրակտորն և պահեստամասեր (70) տեսակի: Ինչպես Ճապոնիայի, այնպես էլ Չինաստանի կառավարությունների կողմից դրանց մատակարարումը հանրապետություն կատարվեց ՀՀ կառավարության 2000թ. հունվարի 26-ի որոշմամբ, որը որակվեց որպես մարդասիրական օգնության ծրագիր:<sup>3</sup> Դրանք ապահովեցին բավարար արտադրողականություն:

Հանրապետությունում եղած ավելի քան 333 հազար գյուղացիական տնտեսությունների նյութատեխնիկական բազան 2000 թ. դրությամբ ուներ հետևյալ պատկերը.

- տրակտորներ-13,1 հազար հատ,
- բեռնատար ավտոմեքենաներ-12,7 հազար հատ,
- տրակտորային գութաններ- 3,6 հազար հատ,
- տրակտորային սերմնացաններ- 1,6 հազար հատ,
- կուլտիվատորներ- 2 հազար հատ,
- հնձիչներ- 0,8 հազար հատ,

---

<sup>1</sup> Աղբատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում, Եր., 2000, էջ 14:

<sup>2</sup> Միխայան Է., Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003 թթ.), Եր., 2003, էջ 93:

<sup>3</sup> Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, հ. 2, 14 փետրվարի, 2000, էջ 50-51:

- հացահատիկահավաք կոմբայններ- 1,3 հազար հատ,
- սիլոսահավաք և կերահավաք կոմբայններ- 0,4 հազար հատ
- տրակտորային խոտհնձիչներ- 1,4 հազար հատ<sup>1</sup>:

Գյուղացիական տնտեսությունների մանր չափերը պահանջում էին Հայաստանում արդի գյուղատնտեսական (լեռնային հողագործության և մանր արտադրության պահանջներին համապատասխանող) մեքենաշինության ստեղծում: Ուրեմն անհրաժեշտ էր պետականորեն հոգ տանել հանրապետությունում եղած արտադրության միջոցների ինսամբի ու պահպանման, դրանց օգտագործման արդյունավետության բարձրացման նկատմամբ: Այդ տեխնիկան կարելի էր կենտրոնացնել համատեղ օգտագործելու նպատակով: Միաժամանակ համալիր ծրագիր մշակելիս հարկավոր էր հաշվի առնել 50 ձիաուժանոց տրակտորների պահանջարկը և այն, որ տարիներ շարունակ չէր թարմացվում գյուղտեխնիկայի հավաքակազմը, որի միայն 2,7 %-ն էր, որ թողարկվել էր 1994 թ. հետո, չկար օժանդակ տեխնիկա, չկային նյութեր ներմուծող տարբեր տեսակի միջնորդ ֆիրմաներ, ընկերություններ, տեխնիկայի վարձույթի կետեր: Փաստորեն ագրոսպասարկման աշխատանքներն անարդյունավետ էին՝ վճարման և այլ ինդիկատորները կարգավորված չլինելու պատճառով: Ցածր էին նաև արտադրական և ոչ արտադրական ֆոնդերի սեփականաշնորհման տեմպերը: Կովանոցները սեփականաշնորհվել էին 39,2%-ով, ոչխարանոցները՝ 34,8%-ով, վերանորոգման արհեստանոցները՝ 30,5%-ով, վարչական շենքերը՝ 11,9%-ով: Չսեփականաշնորհված հիմնական միջոցները մնացել էին անտեր ու չէին օգտագործվում<sup>2</sup>:

Սեփականաշնորհման ընթացքում մասնավորեցվին հանրապետության ագրո-արդյունաբերական համալիրում եղած վերանորոգման արհեստանոցների 52840 բառակուսի մետր օգտակար տարածքից 1682-ը, 6373 տոննա արտադրական կարողության կերախոհանոցներից և կերարտադրամասերից՝ 930-ը, 52945 տոննա կարտոֆիլի, բանջարեղենի և մրգեղենի միանվագ պահպանման պահեստարան սառնարաններից՝ 16530-ը, 5054 հանդերձարան-տեղով գյուղական բաղնիքներից՝ 1116-ը: Այդ ամենից բացի, այդ նույն ժամանակահատվածում հանրապետությունում եղած 931 կերահավաք կոմբայններից սեփականաշնորհվեցին 450-ը, միջինը մոտ 9762 ռուբլով, 4865 տրակտորային գուրաններից՝ 2602-ը՝ մոտ 447 ռուբլի

<sup>1</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1999-2000 թթ., Եր., 2001:

<sup>2</sup> Մամիկոնյան Հ., ՀՀ գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնախնդիրները, Եր., 1997, էջ 20:

միջին գևով, 2344 սերմնացան մեքենաներից՝ 1176-ը՝ մոտ 1163 ռուբլի միջին գևով<sup>1</sup>: Եթե նկատի ունենանք նաև այդ տարիներին ռուբլու արժեզրկումը, ապա բերած թվերից դժվար չէ կռահել, որ սեփականաշնորհված արտադրական ռեսուրսներն իրացվել են դրանց իրական արժեքը չարտահայտող բավականին ցածր գներով: Մյուս կողմից՝ բերված թվերից երևում է, որ հանրապետության հանրային գյուղատնտեսության հիմնական ֆոնդերի ավելի քան երկու երրորդը այդ տարիներին (1991-1994 թ.թ.) չի սեփականաշնորհվել: Ճիշտ է, չսեփականաշնորհված հիմնական միջոցների մի մասը մտնում էր դեռևս պահպանվող պետական տնտեսություններում և օգտագործվում էր դրանց կողմից, մի մասն էլ ամրացվեց գյուղական խորհուրդներին՝ նորաստեղծ գյուղացիական տնտեսություններին սպասարկելու նպատակով, այնուամենայնիվ հազարավոր շենքեր, շինություններ, արհեստանոցներ, մեքենահավաքակայաններ, պահեստներ, կերախոհանոցներ, կերարտադրամասեր և այլն մնացել էին չսեփականաշնորհված և հետագայում թալանվեցին: Դրանց զգալի մասը գյուղատնտեսական արտադրության մեջ այլևս չօգտագործվեց: Ուրիշ խոսքով, Հանրապետության ազգային հարստության զգալի մասը վերածվեց մեռյալ կապիտալի:

Գյուղատնտեսական արտադրամիջոցների սեփականաշնորհումը, փաստորեն կատարվեց առանց ագրոարդյունաբերական համալիրի մյուս կարևոր ճյուղերի և օղակների համընթաց սեփականաշնորհման<sup>2</sup>: Դրա հետևանքով գյուղատնտեսությունը երկար ժամանակ աշխատում էր որպես մասնավոր սեփականության, իսկ նրան սպասարկող ճյուղերը՝ որպես պետական սեփականություն, ինչը բացասաբար անդրադարձավ ամբողջ ագրոպարենային համալիրի արդյունքների վրա:

Ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ կատարված ագրարային վերափոխումները Հանրապետության գյուղական բնակավայրերի մեծ մասում հանգեցրել էին ինքնաբավ բնատնտեսական բնույթի համակարգի ձևավորմանը: Կտրտված, միմյանցից մեծ հեռավորությունների վրա գտնվող հողակտորներում ինտենսիվ գյուղատնտեսության վարումն, ըստ էության, հնարավոր չէր: Գյուղացիական տնտեսությունը, ունենալով առաջարկի ավելի մեծ հնարավորություններ, չէր կարողանում կազմակերպել իրացումը,

---

<sup>1</sup> Ֆաիրադյան Հ., Ագրարային արմատական վերակառուցումներ Հայաստանի Հանրապետությունում. անիրաժեշտություն, արդյունքներ, հիմնախնդիրներ, Եր., 2003, էջ 142:

<sup>2</sup> Տե՛ս Մանասերյան Ն., նշվ. աշխ., էջ 105:

որով, բնականաբար նվազեցվում էր գյուղատնտեսական գործու-  
նեության արդյունավետությունը:

Գևորգյան Մարինե  
**ԳՅՈՒՂՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ  
ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՅԱՆ ԸՆԹԱՑՔՆ ՈՒ ՅԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ  
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՍՈՒՄ  
(1991-2000 ԹԹ.)**

***Բանալի բառեր** - Ագրարային վերափոխումներ, գյուղտեխնիկա, սեփականաշնորհում, գյուղացիական տնտեսություն, ագրոարդյունաբերական համալիր, մեքենատրակատորային կայան:*

Յոդվածում քննարկվել է ՀՀ-ում ագրարային վերափոխումների համատեքստում կատարված գյուղատնտեսական մեքենաների սեփականաշնորհման գործընթացը և արդյունքները: Վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ համատարած թալանվեցին տասնամյակներով ստեղծված ֆերմաներն ու տեխնիկան՝ ընդ որում մեծ մասամբ հայտնվելով գյուղատնտեսության հետ կապ չունեցող մարդկանց ձեռքում: Սեփականաշնորհման հետևանքով զրկվելով գյուղտեխնիկայից, պարարտանյութերի և թունաքիմիկատների օգտագործման հնարավորություններից՝ գյուղացին մնաց մենակ իր փոքր հողակտորի հետ՝ հույսը դնելով ձեռքի անարդյունավետ աշխատանքի վրա, ինչն էլ հանրապետության գյուղատնտեսության մեջ հանգեցրեց անկումային երևույթների խորացմանը:

Gevorgyan Marine

**THE PROCESS AND RESULTS OF THE PRIVATIZATION OF AGRICULTURAL MACHINES AND OTHER PRODUCTIONAL MEANS IN RA IN THE CONTEXT OF AGRARIAN REFORMS (1991-2000)**

***Key words** - agrarian reforms, agricultural machinery, privatization, farm, agro-industrial complex, machines and tractor park.*

The process and results of privatization of agricultural machines in the context of agrarian reforms in RA has been discussed in the article. During the analysis as it turned out, farms and machines, created during several decades, were robbed. The machines were given to persons who weren't connected with agriculture. Losing the chances of usage of agricultural machines, fertilizers and pesticides in the result of privatization, farmers stayed alone with their small piece of land relying on their own inefficient work. This situation aggravated decadent state of republican agriculture.



Геворгян Марине

**ПРОЦЕСС И РЕЗУЛЬТАТЫ ПРИВАТИЗАЦИИ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОЙ  
ТЕХНИКИ И ИНЫХ ПРОИЗВОДСТВЕННЫХ СРЕДСТВ В РА В КОНТЕКСТЕ  
ОСУЩЕСТВЛЕННЫХ АГРАРНЫХ РЕФОРМ (1991-2000 ГГ.)**

***Ключевые слова** - аграрные реформы, сельскохозяйственная техника, приватизация, ферма, агропромышленный комплекс, машинно-тракторный парк.*

В статье были обсуждены процесс и результаты приватизации сельскохозяйственных машин в контексте аграрных реформ в РА. В результате анализа было выяснено, что фермы и техника, созданные десятилетиями, были разграблены: техника часто оказывалась в руках людей, не имеющих связь с сельским хозяйством. В результате приватизации, потеряв возможности использования сельскохозяйственной техники, удобрений и пестицидов, крестьянин оставался наедине с его маленьким куском земли, связывая свою надежду с собственной неэффективной работой, что усугубляло упадочные явления в сельском хозяйстве республики.